



ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԹ ՏԱՐԻ, ԹԻԻ 3

1861

ՄԱՐՏ 1

ԱՌԱԿԱԽՕՍ ՍԵՐՈՎՔԻՆ (Տես երես 33)

Ե

Ժողովալ կենաց ընկերոսքի շնորհներ:

Իրախճան անշուք յարգարեսցի մեծատան
Ուի բնաւ կոչնոցն իցեն պարգեւք անմեկին.
Իսկ գանձ զլացեալ առ պերճ գինեացն զեղխանս՝
Խոնարհ յարկաց սիրելաբար պաշտեսցին.
Թող որ մի հէքն ուղղէ սեղան զուարթագին:

ՄԱՆՁՈՆԻ.

Չեմ ուզեր լռել անցնիլ, ո՛վ պատա-
նեակ, այն գեղեցիկ նոր սովորութեան
վրայօք՝ որ մտաւ Մեծերիկոյ Միացեալ
Կազանգաց մէջ: Արով՛հետեւ դժբախ-
տաբար չափէ դուրս յաճախած էր հոն
քերներու, օղիի, չոփ սովորութիւնը,
տեսան որ տասը տասուերկու խմողնե-
րէն գոնէ մէկը զեղծանելով՝ իր առող-
լութիւնը կը վնասէր. այս բանիս ճար
մը գտնելու համար, 1826ին քանի մը
բարի անձինքներ ժողովալ կենաց ըն-
կերութիւն մը հաստատեսցին, և որոնք
որ այն ընկերութեան անդամ կը գրուէ-
ին, պէտք էր որ խոստանային ջրէն

զատ ուրիշ ըմպելիք մը չխմելու: Այն-
օգուտ ըրաւ օրինակը, ևս առաւել այն
գերբերն զոր տարածեցին իրենք ժո-
ղովորդեան մէջ, ցուցնելով թէ ինչպէս
ամէն տարի 400 հոգիէն աւելի կը մեռ-
նէին այն գաւառին մէջ, ուր գինեմո-
լութիւնն ու ցոփութիւնը յաճախած
էր. ուր մնաց որ այնչափ դրամոց գու-
մարներ կը վատնուէին, զոր կրնային
առանձնականաց և հասարակաց օգտին
բանեցընել:

Այս ընկերութեանս հիմնադրու-
թիւնը այնչափ հաճոյ անցաւ որ սոսկ
Միացեալ Կազանգաց մէջ չորս տա-
րիէն վերջը՝ այս տեսակ ընկերութեց
թիւը 1,600^ը անցաւ, որոնց ընկեր գը-
րուած էին 160,000^{էն} աւելի անձինք,
արք և կանայք, տղաք, խանութպանք,
նաւաստիք, արհեստաւորք: Այնչափ
անբաւ մարդիկ որոնք գինովութեան
ամենագէշ ախտէն բռնուած էին, բո-
լորովին սթափեցան. և հաշիւ ըրին
որ տարին միլիոն մը ֆրանգի ինսայու-
թիւն կ'ըլլար. վասն զի ինչպէս կ'ըսէ

Սերովալէն, Պոսոս պոսոս Զրո՛վ կ'ըլլայ մեծ ծով:

Վիտելով գործաւորաց այն չար սովորութիւնը՝ որոնք կիրակի օրեր սաստիկ կ'ուտեն կը խմեն, և երկուշաբթի դատարկ կ'անցընեն, որոշեցին որ երկուշաբթի օրեր կէս օրուան ատեն հատուցանեն անոնց ուճիկը, քանի որ մտքերնին թարմ է: Եւ այսպէս փոխանակ ստակը գինեվաճառաց ու պանդոկապետներուն քսակը լեցընելու, Խնայութեան Վանձարանը կը տանէին, որ կը պահէր զայն և կ'աճեցընէր՝ իրենց հիւանդութեան և ծերութեանը ժամանակ օգնելու համար:

Եւն նահանգներէն մէկուն մէջ՝ օրիորդները միաբանելով սահմանեցին որ բնաւ գինեմոլի հետ չամուսնանան. ինչպէս ուրիշ տեղ կարգաւ չգիտցողի հետ չեն հարսնախօսեր:

Արովհետև արժանի է որ բարի գործքերուն ալ հետևողներ գտնուին, Խուլանտա, Սկովտիա, Լնգղիա, Ռուսաստան, ամէն տարի երթալով կ'աճին այս ընկերութիւնները: Լնցեալ տարի Լնգղիոյ մէջ այս տեսակ 130,452 ընկերութիւն կար. իսկ Սիւացեալ Եւրոպայի հանգաց մէջ 8000, երկու միլիոն անդամներով:

Փափաքելի էր որ մեր մէջն ալ տարածուէին այս ընկերութիւնքը, մանաւանդ գեղերը, ուր խել մը թեթև գըլուխներ բոլոր շաբթուան մէջ աշխատութեամբ վաստրկածնին՝ կիրակի և երկուշաբթի օրեր կը մսխեն: Յանկալի էր որ վաստրկածնուն մէկ մասը մէկգլխի գնել սորուէին, որ թէ յանկարծ դրժբախտութիւն մը պատահի, կամ արտաքոյ կարգի ծախքեր ունենան՝ ան ստակը գործածեն, և կամ ընտանեաց մէջ պատառ մը բան վայելեն, որ շատ համով կու գայ. և այսպէս աւելի առողջ կ'ըլլան, զուարթ և յարգելի:

Եւ ինչո՞ւ պիտի չկարենանք ետ կենալ շաբթուն մէկ երկու օրերուն մէջ քանի մը դուզնաքեայ բաներէ: Եւրաքանչիւր տօներուն խնայած երկու փողերնիս՝ բաւական կ'ըլլայ հացազուրկ

կարօտի մը պէտքը լեցընելու. աս ալ կայ որ կամայական զրկումները կը վարժեցընեն զմեզ ակամայներուն ալ սիրով տանելու:

Սիրելի տղայ մը կը ճանչնամ, որ ամէն շաբթ օր իր գինին հիւանդ ծերու մը կը տանի. և հանդիսի օրեր սովորականէն աւելի եղած բաները նոյն խեղճին համար կը պահէ. կը ճանչնամ ուրիշ մըն ալ որ ամէն օր նախաձաշկի թացանին՝ տեղ, մօրմէն երեք փող կ'առնէ. և այսպէս ամէն կիրակի իր դայեկին քսանըմէկ փող կը տանի, որոնցմով խեղճ կինը նոյն օրուան աղքատ սեղանը լիտր մը մսով կը զարդարէ:

2

Անձեոյ Բաւոտոյֆիւնի:

Միշտ կարևոր համարեցայ յաճախել առ ծերս, հարցանել զնոսա, ունին գնել նոցա, և հնազանդել նոցա. քանզի վեհազոյն ուսուցիչ ամենայն իրաց՝ ժամանակն է:
ԲԱՆՏՈՒՅԻՆԻ.

Սաճառական հարուստ ընտանիքէ մը ծնաւ 1365^{են} ՚ի Փլորենտիա Լնգղիայ Բանտոյֆիւնի: Երիտասարդութեանը ժամանակ շատ գրոց ետևէ չինկաւ հապա սկսաւ քննել մարդկութիւնը, և իր առուտուրներուն ու հայրենեացը շահը մտածել: Ղարտար և առաքինի մարդ ճանցուելով, իր աշխարհին դատաւոր ընտրուեցաւ, և այն ատեններ Փլորենտիոյ կառավարութիւնը հասարակապետական էր: Եւսպէտ շատ հել ձուածներէ պառակտած էր Փլորենտիա, սակայն ինքը ամենուն հետ իր հականութեամբ վարուելով, կրցաւ բալորին մեծարանացն արժանի ըլլալ, և տարաց սիրելի և երջանիկ իր տան մէջ Երբ ծերացաւ, իր վաճառականութիւնն որդուցը թողուց, իսկ պաշտօններն ալ պատանեգոյն անձանց. և ինք իր դաստակերտը քաշուեցաւ, ուր ել կրագործութեամբ անցուց իր վերջ

1 ՏՃ. Գորշէ:

տարիները, ընտիր բարեկամներու տե-
սութեամբ և ուսմամբ բարոյականի :
Իր որդւոցը օգտին համար Հրահանգի
միջոցով զանազան ընդհանրապէս զրուածք
մը հանեց, որուն մէջ մատակարարու-
թեան կերպերը և տուն մը ծաղկեցը-
նող բաները կը սորուեցնէ, և կը վար-
ժէ զմարդ քաղաքավար և գոհ ըլլալ
ընկերութեան մէջ :

Եւ յիշատակէն շատը, ով պատա-
նեակք, ձեզի հարկաւոր սեպելով, կ'ու-
զեմ հոս կարգաւ գնել : Մտիկ ըրէք
իր հին ոճով ըսածներուն, և կը տես-
նէք որ շատ բան տեսնող ծեր մըն է
խօսողը, որ իր փորձառութեամբն ան-
փորձները կը թել կ'ուզէ : Ո՛ր էր թէ
իր խրատները ձեզի ալ օգտակար ըլ-
լային, ազնիւ պատանեակք :

Խնայողութեան Առաջք .

Ո՛վ որ իր քսակին մէջ ստակ չգտներ,
ուրիշներու քսակին մէջ գտնել չյուսայ :

Փուճ և անպատճառ տեղ մտնողէ մը
աւելի յարմար բան մը չկայ՝ չէ թէ
միայն ընտանիք մը, այլ և ամբողջ հա-
սարակութիւն մը և գաւառ մը կործա-
նելու համար . և յետոյ երբ աս շուայ-
ները չքաւորութեան մէջ կ'իյնան,
բարեկամ և բարերար մը չեն գտնար :

Հեշտութեամբ ապրելէն և չար ըն-
կերութիւններէ՝ զգուշացիր : Պահէ
ունեցածդ, պիտոյիցդ չսփ ծախք ըրէ .
փախիր ախտերէ, առաքինութեան ե-
տեէն գնա, հնազանդէ մեծերուդ,
զուարթ, յարգելի և սիրելի եղիր : Ին-
տանութիւն ըրէ լաւ անձինքներու հետ,
օրինակ առ անոնց վարքէն և խրատնե-
րէն . թեթեւ և ունայնամիտ մի ըլլար :

Ընդհանրապէս ըսել թէ կայ արդեօք
չուայութեան աւելի փնասակար բան,
և թէ որչափ օգտակար և շահաւոր է
չափաւորութիւնը : Խնայութիւնը մէ-
կու մը զեն չտար, կ'երջանկացնէ զըն-
տանիս և բաւականարար կ'ըլլայ, ու-

րիշի կարօտութիւն չունենալով : Ո՛ր-
չափ աւելորդ ծախքեր, որչափ ամօթա-
լի փափաքներ կը կարճեցնէ չափաւո-
րութիւնը : Եւ որ բնաւ ուրիշ բան
մ' ալ չըլլայ, պէտք է որ ինայող ըլ-
լանք, որպէս զի ներսերնիս մխիթարու-
թեամբ մը լեցուի, և պարկեշտութե-
ապրելով բախտին մեզի տուածովը գոհ
ըլլանք . ով որ ունեցածին վրայ գոհ է,
կարօտ չկրնար ըսուիլ :

Ինչոնք կ'ըսուին ինայող՝ որոնք գի-
տեն շատին և քիչին մէջ կենալ . այս-
ինքն է՝ դիտել միշտ որ ըրած ծախքը
չատ մեծ չըլլայ, համեստութեան չա-
փը չանցնի, և ոչ ալ պիտոյիցը նուազ
գայ : Խնայողութիւն ըսելով չեմ հաս-
կրնար ունեցածը պահել, հապա ընդ-
ունայն չվատնել : Ունեցածը պիտոյից
ատեն չգործածելը՝ չէ թէ միայն ագա-
հութիւն է և պախարականաց արժա-
նի, այլ և փնասակար իսկ : Երդեօք ուշ
դրեր ես բնաւ այն անմիտ կանանց ը-
րածին, որոնք կը դիզեն ու կը պահեն
ունեցած ինձորնին և ուրիշ պտուղնե-
րը, և չեն ուտեր ինչուան որ չապակա-
նին ու չփտին . վերջը կը սկսին կէսէն
աւելին պատուհանէն նետել . իբր այն
թէ նետելու համար պահած ըլլային :
Ի՞նչ թէ աւելի աղէկ չէր, խենթ պա-
ռաւուկ, որ առաջունէ նետելի ալ
քանի մը գէշացածներն, ու աղէկները
պահելի քու սեղանիդ կամ ընծայ ընե-
լու համար : Ետոր պահել չէք ըսեր,
հապա նետել : Եւ մանապէս տանիքէն
կը սկսի անձրև կաթկըթել . ագահը
վաղուան կը սպասէ, վաղն ալ երկրորդ
օրուան, չուզեր ծախք ընել . դարձեալ
կը կաթկըթել . վերջապէս գերանը թա-
ցութեան կամ կը փտի, կամ կը կոտրի .
և քանի մը փողով ըլլուելու բանը, հիմա
տասուերկու փողով կ'ըլլայ : Եւ տես-
նէս ուրեմն որ ատենին և ըստ պիտոյից
ծախք ընել չգիտնալը ինչպէս փնասա-
կար է : Խոհականութեամբ բան պա-
հել և ծախք ընել գիտնալը, երջանկու-
թեանն, ճարտարութեանն և վաստը-
կելէն աւելի աղէկ է :

Երբեք բան կայ որոնք յատուկ են մեզի, և զորս բնութիւնը մեզի տուաւ, հանդերձ ազատութեամբ որ մենք գործածենք զանոնք բարի կամ չար, որչափ և ինչպէս որ կը հաճինք և մեզի կ'երևայ: Առաջինն է հոգւոյն այն փոփոխութիւնը, որով ախորժ կը զգանք, կը բարկանանք և կ'այլայլինք: Երկրորդն է մարմինը. երրորդն և պատուականագոյնն է՝ ժամանակը: Ս'եր այս երեք ձիրքերովը կրնանք խնայող ըլլալ:

Ո՛վ որ ժամանակ կորսնցընել չգիտեր՝ ամէն բան լաւ կ'ընէ. և ո՛վ որ կրնայ զայն ըստ պատշաճին 'ի գործ ածել՝ ամէն բանի տէր կ'ըլլայ:

Եթէ կ'ուզես ժամանակ չկորսնցընել, ինծի պէս ըրէ: Առաւօտն որ կ'ելլամ, ես ինծի կ'ըսեմ. Այսօր դուրսը ընելի՛ք ինչ ունի՛մ. սա և սա բաները. կը համբերմ ու իւրաքանչիւրին ժամանակ կը սահմանեմ. սրւիկա առտու. սրւիկա այսօր. ատ ալ աս իրիկուն. այսպէս ամէն բանս կարգով կանոնով կ'ընեմ՝ առանց ժամանակ անցընելու: Յետոյ իրիկուան հաշիւ ըրէ օրուան մէջ ըրածներուդ, և եթէ բանի մը մէջ անհոգացեր ես, թէ որ կրնաս նոյն ատեն ճարը գտնել՝ մի դանդաղիր. աւելի ուզէ քունդ ծախել՝ քան թէ ժամանակը. այսինքն՝ գործքերուդ կարգն ու կանոնը:

Ան որ հարկ է ընել, կ'ուզեմ շուտով լմնցնել. ուրիշ բանի համար չէ, բայց եթէ ան մտածութենէն թեթեւամանոր համար կարևոր սեպուած ծախքերը չեմ ուշացներ. կամաւորները կ'ուշացնեմ որչափ որ կրնամ, տեսնելու համար թէ արդեօք այն փափաքը նոյն միջոցին կը դադրի. թէ որ դադրելու ալ չըլլայ, գոնէ ատեն կ'ունենամ լաւ մտածելու թէ ինչպէս քիչ ծախք ընեմ, և աւելի գո՛հ ըլլամ:

Եւ ատ առաջ սկսէ մտածել թէ ինչ

բան հարկաւոր կրնայ ըլլալ, և այսպէս կ'իմանաս հարկաւոր եղածը, և թէ ուսկից կրնաս գնել, բայց առանց սպասելու որ ունեցածդ լմննայ. որպէս զի ժամանակ ունենալով՝ քիչ ծախքով լաւագոյնը գնես: Արտորնօք գնուածը՝ շատ անգամ գէշ կ'ըլլայ կամանմաբուր, շուտ կ'ապականի և աւելի սուղի կը նստի, ու գործածուածէն աւելին հարկ կ'ըլլայ նետել:

Գնելու և ծախելու ատենդ միշտ պարզ, ճշմարիտ, բարեմիտ և արդար եղիր, թէ՛ օտարին և թէ՛ բարեկամիդ հետ. ամենուն հետ եղիր անխարդախ և բարեկիր: Արհեստաւորաց համար աւելի կ'արժէ բարի համբաւ ու խանութի երթևեկ ունենալը՝ քան թէ հարստութիւնը: Ա՛ճառականին և ամէն խանութպանի պաշտօնն է, որոնք շատ անձանց հետ առուտուր ունին, գրելու արթուն ըլլալ, ամէն գնուած ու ծախուած բանը, ամէն սակարկութիւն, և ամէն ելումուտք թէ՛ խանութին մէջ եղեր է և թէ խանութէն դուրս՝ գրի անցուր. միշտ ձեռքդ ըլլայ գրիչը:

Անհաւատարիմ տնտես մը ունենալէն աւելի աղէկ է բնաւ չունենալը. և անոնց վրայ վստահ ըլլալու համար, պէտք է որ տէրը միշտ հսկէ ու աչք ունենայ վրանին:

Ստակը պէտք եղած ատենը գործածէ. աւելորդը պահէ, և եթէ հարկ ըլլայ՝ բարեկամիդ, ազգականացդ ու հայրենեաց ծառայեցուր: Ամենուն օգտակար ըլլալը՝ գթութեան պաշտօնն է:

Արդեակք իմ, առողջ մարդը ինչ կերպով որ ըլլայ միշտ կը վստարկի. հիւանդ մարդը չեղածի պէս կը սեպուի: Չ'անք ունեցիր քեզի փնասակար եղածը ճանչնալու, և զգուշացիր անկից. քեզի օգտակար և շահաւէտ եղող բանին ետեւէն գնա: Տաքարիւն և առողջ անձն եղողը պէտք է որ ժուժկալ ալ ըլլայ. զուարթ ու կայտառ ապրիլ ու

զողը , պէտք է որ ինքզինքը անոր վարժեցնէ : Արեւուն առողջութիւնը՝ իր երիտասարդութեան ատեն ունեցած զգաստութեանը վկայ մըն է :

Այս ծերոց համար անկէ աւելի մեծ մխիթարութիւն , ինչպէս տեսնել իրենց զաւկրները կիրթ , պատկառոտ և առաքինի :

Միշտ խելքս միտքս ան եղած էր որ բարի վարդապետութեանց , աղէկ գործքերու , գիտութիւններու , սորուելու , հասկընալու , ինքզինքս ամենուն սիրցնելու , ուրիշներէն յարգոյ և մեծարելի ըլլալու ջանամ . մանաւանդ առաքինի , արդար և պարկեշտ ըլլալու մեծ փոյթ ըրի , ոչ զոք խաբել կամ նախատել՝ կամ խօսքով և կամ գործքով : Ասոնք են հոգւոյն գործքերը . հրահանգել , խրատել , սխալողն ուղղել , անձնամատոյց ըլլալ ուրիշի սիրով , հաւատքով և գթութեամբ . բարի խորհուրդներ տալ թէ հասարակաց և թէ առանձնականաց , խոհականութեամբ , ճմարտութեամբ , զգուշութեամբ և յարատեութեամբ . իր հանձարը , գիտութիւնն և ճարտարութիւնը՝ իրեններուն և հայրենեացը բարւոյն ու պատուոյն գործածել :

Ըստուծոյ հետ աղէկ վարուելու երկու կերպ ունիմ . մէկն է ըստ կարելոյն հոգիս ազատ պահել ՚ի բարկութենէ , յատելութենէ և ՚ի խաբէութեանց . վասն զի մաքուր և պարզ հոգին շատ հաճոյ է Ըստուծոյ : Արկրորդն է՝ ձեռքէս եկածին չափ միշտ դիտել որ ընելուքս այնպիսի բան չըլլայ որ վերջ տարակուսիմ թէ արդեօք լաւ չէ նէ գէշ ըրի , կամ թէ զղջամ : Արծեմ թէ այսչափը բաւական է . որովհետեւ գիտեմ որ աղէկ և ճմարիտ գործքերը՝ բոլոր պէս անազօտ և պայծառ են ՚ի մեզ , բայց պէտք է ՚ի գործ դնել . իսկ խաւարային և չար գործերը՝ միշտ ըզարդ կասկածոտ ու երկմիտ կ'ընեն , որոնց վախճանը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ

զուարճութիւն մը և հաճոյք ու ապականեալ կամք , և ասոր համար պէտք չէ ընել՝ հապա փախչիլ : Առսոյն ետեւէն գնա . փախիր խաւարէն :

Վուրեղի է մարդասէր , ժիր և համեստ պատանին . առանց զղջման ու ցաւի ախտ չըլլար . առաքինութիւնը զուարթ և շնորհալի է :

Սամանակին զքեզ յարմարցուր :

Չանա որ գովելի յատկութիւններով զքեզ զարդարես . նայէ որ արժանի ըլլաս ուրիշի գովեստին ու շնորհացը , մեծարանաց ու պատկառանաց :

Առաքինութենէն աւելի դիւրաստանալի բան չկայ . առաքինութիւն չուզողն է միայն զուրկ անկից :

Օւակրներն , ամուսինը և տան մէջ եղող ուրիշ անձինքները , պէտք է լաւ ու օգտակար բաներու գործածել . ձեռքէն եկածն ընել զանոնք առողջ ու զուարթ պահելու , և դիտել որ ատեննին չկորսնցընեն : Վիտէս թէ ինչ կերպով ժամանակնին չեն կորսնցըներ . իւրաքանչիւրը ելբ իրեն վերաբերեալ բանը կը կատարէ : Այն թէ միայն պարապ կենալով , այլ նաև այն բանն որ մէկ հոգի մը կրնայ ընել , երկու երեք հոգի աշխատին ընելու . և ընդհակառակն ուր որ երկու երեք հոգի պէտք է աշխատին , մէկու մը վրայ աշխատութիւնը կը մնայ , և կամ այնպիսի աշխատութիւն մը յանձնուի մէկուն , որուն ինքը բնաւ յարմարութիւն չունի :

Տանուտէրին պաշտօնը միայն համբարանոցն ու մնուանը լեցընել պիտի չըլլայ . այլ արթուն կենալ , դիտել , քննել իր տղոց ունեցած ընկերութիւնը , իրենց կենակցութիւնը թէ առտնին և թէ դուրսը , և ամէն չար սովորութիւննին . պիտի յորդորէ զիրենք քաղցր խօսքերով , և ոչ բարկութեամբ ու զայրացմամբ . փուճ տեղ անաչառ , խիստ

և դեպ չլլալ . հոգալ միշտ ընտանեաց բարին ու հանգիստը . առաջուցունէ առջևը առնել այն ամէն վտանգներուն , որոնք կրնան գերդաստանին գլուխը գալ . զաւկըներուն մանկական մտքին մէջ բորբոքել ուսմանց սէրը . ամէն ախտից հետքը արմատաքի իլել սրտերնէն , և զարգացնել մտքերնին գեղեցիկ հրմտութեամբք , ամէն բանի անձամբ օրինակ տալով :

Աւերը վարձատրելէն 'ի զատ չկայ ուրիշ յարմարագոյն և օգտակարագոյն կերպ մը՝ պաշտօնասէր , քաղաքավար և հոսպանդ ընելու բոլոր ընտանեաց անձինքը :

Իրեններն երեսէ թողուլ և օտարները հոգալ՝ նշան է նուազ եղբայրսիրութեան . իրեններուն վրայ չլստահանալ ու ուրիշներու հաւտալը՝ նշան է խաբէբայութեան : Յիրաւի , իրենները շիրտը՝ սիրել չգիտեր : Ս՛վ որ իրեններուն հետ չկրնար կենալ , ուրիշներու հետ բնաւ իսկ ոչ :

Խիստ հաճոյ բան է տեսնել իր տունը ազատ ամէն տեսակ աղմուկէ , լի խաղաղութեամբ և միաբանութեամբ . և ասիկայ առաջ կու գայ՝ ուրիշներու կրիւք տուած տեղեկութեանցը ականջ չկախելէն և հաւատք չընծայելէն :

Քու ամէն գործքերուդ , խօսքերուդ , խորհուրդներուդ և մտածմունքներուդ մէջ եղիր արդար , ճշմարտասէր , բարերար և բարեսէր . զգոյշ կեցիր թշնամութիւններէ , վէճերէ , հակառակութիւններէ և անիրաւութիւններէ : Իսկ եթէ մէկը գոռոզութեամբ և հայարտութեամբ ուզենայ վրադ ճոխանալ , համբերութեամբ և երկայնատութեամբ կակղացու զինքը , և յաղթէ իրեն բռնութեանցը՝ խոնարհութեամբ , ծանրութեամբ և պարկեշտութեամբ :

Երբ բան մը յօժարութեամբ ու սի-

րով կը կատարես , թէ և դժուարին ըլլայ ընելիքդ , բայց միշտ աղէկ կերպով կ'ըլլայ : Միշտ պէտք է ինքզինքը Լստուծոյ յանձնել ու շնորհք խնդրել իրմէ . առանց իրեն մեր ամէն գործքերը բանի չեն գար :

Կը շարունակուի :

Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ԱՌ ՊԵՐՃԱՓՈՅԼ

ԱՐԲԱՋԱՄ ԱՄԻՐԱՅ
ԵՒ ՏԻՐՈՒՆԻՅԱ ՏՈՒՏՈՒ

Ողերձ :

Ուրիշ ազգաց մէջ հին ատենէն 'ի վեր գտնուեր են ու կը գտուին գրական կանայք ու օրիորդք , մանաւանդ բանաստեղծութեան մէջ՝ որ իրենց փափուկ երեւակայութեանը աւելի յարմար է գրականութեան այս մասը : Ս'եր ազգին մէջը կարծես թէ 'ի սկզբանէ հետէ եկեղեցականաց միայն պահուած էր գրականութիւնը , աշխարհականներէն ալ քիչ եղած է գիրք գրող , թող թէ կանանցմէ : Լ'անդութեանէ գիտցածնիս՝ սրբոյն Ա'ահանայ գողթնացւոյն շարականն է , իր քրոջը շինածը՝ որուն սկիզբն է "Օ'արմանալի է ինձ քան զերգս ,":

Յուսանք որ աս դարուս մէջ , ինչպէս որ մեր ազգին աշխարհականաց մէջ սկսաւ ծաղկիլ գրականութիւնը ու իրենք ալ սկսան գրուածքներ հրատարակել , ասանկ ալ խաթուններուն ու օրիորդաց մէջէն ելլեն ուսումնասէլ ու գրական անձինք , որ մեր ազգային լեզուով մատենագրեն ու զայն ճոխացը նելու ջանք ընեն : Ս'եր ազգին բազմադարեան գերութիւնը՝ ուրիշ ազգային բարեաց հետ՝ թշուառաբար լեզունի ալ խափաներ էր , անանկ որ քիչ տուկը գտուէր որոնք հայերէն խօսէին չիմա աս միսթարանքը ունինք որ ընհակառակն քիչ տուն կը գտուի որ հայր